ՀԱՆԴԷՍ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԿԱՅԻՈՍ ԳՐԱԿՔՈՍ

ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ ՎԻՆԿԵՆՏԻ ՄՈՆՏԵԱՑ

(ՏԵՍ ՀԱՏՈՐ ԽԵ. ԷՋ ՅՅԱ)

ՀԱՆԴԷՍ ԵՐՐՈՐԴ

ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

ԿՈՌՆԵԼԻԱ, ԼԻԿԻՆԻԱ ԵՒ ԿԱՅԻՈՍ

կոռնելիա

Որդեակ իմ, ցածո՛ զսրտմտութիւնդ, դարձ 'ի քեզ.
Ցե՛ս, որդեակ իմ փարելի. ակն 'ի ցաւոց մայրական
Եւ հարսինդ ածջիր, զոր արդ, տե՛ս, լուծանի յարտասուս
Մի՛ քեզ 'ի գրկաց աստի 'ի բաց խուսափել...
Հայեաց, անողորմ, ահա ես ինքն աղաչեմ։

կայիոս

Ա՛խ, մայր իմ...

կոռնելիա

Տե՛ր, մի՛ այդքան դու խրոխտ, որդեակ իմ,
Առներ ինձ պատասխանի. քա՛ւ, ոչ են կամք ինձ ըզքեզ
Առ ապիրատ քոյդ 'ի գութ ...

կայիոս

Մի՛ դու զճիւաղն այն յիշեր.
Քաւ յինէն ըզկատաղիդ դժոխոց 'ի քոյր ինձ ունել.
Հե՛մ զերկաթն 'ի ձեռաց իմոց 'ի բաց կորզեցեր,
Ընդ երակսըն նենգաւոր մինչ գնայր լինել խորամուխ...

digitised by A.R.A.R.@

Ո՛հ, դու յիմա արդ զայն մխեա և ըսպանջի՛ր զիս աստէն։

Կոռնելիա

Աղէ, քաջ խորհեաց. եղեռն նորին չէ ինչ յայտնի,
Ապաշաւ իւր և սոսկումն առ մեզ՝ ընդ փոյթ մեղանացն՝
Առաւել քան զհաւատարիս գործոյն՝ 'ի վեր զայն հանին.
Դեռ թագուն կայ, յայտնեսցեմ՝ յածել նըմին պատուհաս,
Ինքնին՝ զկեղծ վատութեան դրոշմեալ յանուանդ առ 'ի քէն։
Ցայլում ամենայնի կարծիցես դու զիմ՝ բազուկ
Ապիկար 'ի ճօճել զերկաթն. և ուր կայցէ հարկ
Առ 'ի վրէժ պատուոյ՝ մխել զայն և որդւոցս իսկ 'ի ծոց։
Ցիս 'ի ներքս աստ գիտամ ինձ սիրտ՝ թէ ոչ խրոխտագոյն
Տի՛ քաջ իսկ առաւել սէգ քան ըզքոյդ. այլ գլուխս այս,
Գըլուխս իմ այս, որդեակ, է հովագոյն 'ի խորհել,
Եւ ուշիմ զգօնութեամբ վարեալ զզայրոյթ բարկութեան՝
Շեշտ առ նըպատակն ուղղէ զընթացըս նորին։
Ի բաց կացցէ 'ի մէնջ հա՛պ'օն բանից աստ պայքար.
Եւ անսալ քեզ աղերսեմ ձայնիս. զի այլ իմն իրաց
Կերպարանք են արդ, և այլ խորհըրդոց պարտ է լինել։
Համախումբ գումարելոյ ամբոխին մերձ հասեալ ժամ,
Բելլոնեանն 'ի տաճարի խըմբեալ կայ ժանտ ծերակոյտն.
Ի խոհերս եղերանց, քինախընդիր վըրիժուց՝
Զի՞նչ 'ի սորս անդ դարանեալ կըրքեն, թէ ոչ ըզմահ քո։
Ծանրագին են ժամք, և ոչ 'ի դէպ զայն յողըըս ծախել։
Ա՛ռ քեզ միւսանգամ հա՛պ'օն ըզքոյդ արութիւն,
Ամրակուռ զայն ըզսըրտիւղդ բոլորեալ պընդեսջիր.
Գերագոյն կենաց՝ զանձին կա՛լ ըզպատիւ, զհայրենիս։
Ե՛րթ, որդեակ. զի՞նչ և կապեալ հրամանք ըզքէն տան վըճիռ,
Մի՛ յամօթ ըզքեզ և զմայրդ առնել։

Լիկինիա

Եղո՛ւկ, ո՛հ, զինէ։

Կոռնելիա

Լըսեմ զողորմագին քո հեծեծանս, ո՛վ դուստր իմ,
Այլ յամօթ զայն գիտասջիր Գրակքեայ հարսին, հռովմուհւոյդ։

Լիկինիա

Արութեան հռովմայեցւոյ թէ զըժպըհիք են արտօսր,
Թէ օրէնս ինձ տայ՝ զձայն հեղձուցանել զբընութեան,
Եւ զանց ըզսըրբազան առնել պարտուք զամուսնոյ,
Է իսկ զիղջ ինձ, օն և օն, հռովմայեցի ծընանել։
Արտասուք իմ ըզքեզ, մայր, և քոյդ վայրագ արութիւն

Ի թախիծ զիս արկանէ. իցէ՞ ինձ հնար տեսանել
Ա՛ռ 'ի մահ անկրկիւղ ըզքեզ զորդիդ խրախուսել,
Զորդի՛դ քո զայս՝ հոգւոյս իմոյ հատոր սերտագին,
Իցէ՞ ինձ տեսանել, ո՛հ, և ժուժել արտասուաց:

Կոռնելիա

Կամիցիս ուրեմն ապա ինձ փառութեան տալ խորհուրդ.
Կամիցիս Կոռնելիայ...

Լիկինիա

„Մայր լինել. զայլ ինչ ոչ կամիմ։
Զինչ այլ վեհագոյն և սուրբ անուան կայցէ մօր,
Որ 'ի խորս արկցէ հոգւոյ խանդաղատանըս գողտրիկ։
Երիս երկնեցեր. զմին պատըրկաց կորոյս քէն,
Փառաց լուսոյ տոհմիդ ած միւսն ըստուեր եղերամբ։
Երրորդս ևեթ այս քեզ մընայ. և նմին իսկ դեռ ևս
Նըմին իսկ բուռն առնես կախել զուլին մահագոյժ,
Վըշտաց լոկ անձկաւէտ և չարաբաստ աղխից.
Մա՛յր իմ, արութեան ա՛ղէ հանդէս իցէ այս.
Ո՛հ, 'ի սէր խողխողելոյ որդւոյդ՝ յանձին նուիրական,
Լեր պատճառ կենաց եղբօր նորին և իմս ամուսնոյ,
Բերկրանաց՝ տարաժամ թախծեալ աւուրցդ այրութեան,
Եւ հուսկ ակընկալեացն Հռովմայ՝ նըշոյլ յուսավառ։
— Եւ դու, սէր իմ, դարձի՛ր, դարձ խորհըրդոյդ 'ի մըտաց.
Մի՛ նըկուն քեզ զօրութեամբ՝ ճակատագրին դէմ կըքրել,
Մի՛ 'նդ վայր 'ի հանդիսին զոգիդ 'ի բաժին արկանել.
Գիտես քաջ զայն որ արեամբ ներկեալ, յորոց ձեռանէ,
Ոյց, աւա՜ղ, ծարաւահիւծ ոյժմ և քոյումդ իսկ արեան,
Նոյն այն ձեռք սըրեալ զդաշոյնն ունին սըրտիդ քում՝ ընդդէմ։
Մի՛ քեզ ընդ տառաջ նոցին գընալ, աղէ մի՛
Ինքնին դու 'նդ հարուածովք նոցին ըզլանջդ արկաներ։
Ո՛հ, մի՛ քեզ վիճակել, բուռն առնել քում՝ լըծակցիդ՝
Տիբերեայ թափառական յածեալ յափունս ողորմուկ,
Զալիան ողւքել՝ զըլթալ, առ իս տալ 'ի դուրս
Ըզդիդ անդընդակուլ։

Կայիոս

Ո՛վ դու, զոյր նախ ըզշըրթանց
Զառաջին զաստուածական սիրոյ զհամբոյր ընկալայ,
Ում եստ և տաց ըզլթունդ սըրտիս ըզնախն և ըզհուսկ,
Մի՛ քեզ արդ արտասուաքդ այդ զարութիւնս իմ մեղկել.
Եւ մի՛ զիմամարտ պատուոյս, թէ զիս սիրիցես,

digitised by A.R.A.R.@

Ինքնին դու հեծուկս առնել՝ ողբովքդ ինձ ճըգնիր։
Շատ իսկ դառնագոյն և կարեվէր ես ցաւօք
Պարտասեալ դընիմ և խոց, ցաւօք… այլ զի՞նչ շահ օգտի…
Էջ յանուն իմ վաստակեան կեղտ, և ատեամ ես ըզկեանս։

Լիկինիա

Եղուկ ինձ։

Կայիոս

Արիացիր, Լիկինիա, լե՛ր դու քաջ, .
Եւ դիպող քեզ 'ի ժամու կալջիր խորհուրդս և ոգի։
Թէ թըշուառ կենացս յուսարտ զօրս այս Երկինք կընքեցին,
Ոչ ողբոց և արտասուաց 'ի քէն խընդրեմ ես ըզտուրս,
Որ վըստուեր իմ ցաւագին գործէ մահուն 'ի ստորմիս.
Այլ սիրել զիս աղերսեմ և կենդանի ունել միշտ՝
Ցարեւ փարելի որդւոյս. և զինքն հապըստէպ
Կալեալ զձեռանէն՝ ածել առ դուրըս շիրմիս,
Տալ սըփռել լիաձեռն ըզնովիմբ փունջըս ծաղկանց,
Եւ յաղու բարբառ մանկան կարդալ զըստուերն հայրենի.
Խայտասցէ շիրմին 'ի ծոց, ոգևորեալ աճիւնս իմ՝
Նոր կենդանացի բարեպաշտիկդ յոյդ հանդէս։
Եւ դու զհօրըն պատմեսջիր յայնժամ զարկածս աղխոյց,
Զի ուսցի զառաքինի գործոց զհանդէս արութեան.
Գոգջիր մըշտափ վեհագոյն ըզհայրենեաց կալայ սէր,
Եւ թէ որպէս հայրենեաց վասն և ըզկեանս իմ ետու։
Ասասջիր զի և եկաց ինձ հարազատ հօյակապ,
Ընկեալ և նա առ նոյն նըպատակաց կէտ չըքնաղ.
Այլ մի ասասցես, ո՛հ, զի և քոյր ինձ եղև.
Ազէ մի նըմին 'ի վեր հանցես, գօգցես ևս առ նա
Եթէ մուստ եգիտ եղեան 'ի Գըրակքեանց անդր 'ի տոհմ,
Եղեաըն սոսկալի յոյժ, և եղեան, ո՛հ, անվրէժ։

Կոռնելիա

Ո՛հ, զի՞ է քեզ, որդեակ, գուն գործել դառն այդքանի
Աղէկէզ յիշատակօք և զիմս ընկճել արութիւն…
Զի՞նչ ուրեմըն խընդրիցես. բո՛ւռն յարտասուս վաստութեան
Եւ մօ՞րդ ինքնին առնել. այո՛… անգո՛ւթ… կալար զայն։
Զիմոյս Տիբերիայ տեսի զմարմինն յօշատեալ,
Փարեցայ զնովիմբ բազկօքս այս, և ձեռօքս իսկ այսուիկ՝
Ըզվէրսըն պատեցի, համբոյր նոցուն մատուցեալ,
Այլ ոչ լացի. այո՛, այո՛, առանց արտասուաց
Ջայնքանոյ ինձ սիրելւոյս զկեզ տանջանացըն տեսի.

digitised by A.R.A.R.@

Այլ 'ի յուշ դառնաղէտ նըշաւակի սերընդեանս,
Ոչ ևս այլ հանդարտեն բիբք աչացս, և սիրտ իմ փըղձկի....։

ՏԵՍԻԼ ԵՐԿՐՈՐԴ

Քարոզ ոմն առեալ բերէ զվճիռ ծերակուտին, եւ կախէ զայն զսեամբ․ խուռն դիմէ ժողովուրդն անդանօր ընթեռնուլ․ յորոց միոյն մատուցեալ առ ԿԱՅԻՈՍ՝ համակեալ 'ի սուգ եւ ընկճեալ 'ի վշտէ ցաւոցն, եւ ցնցեալ զզգեստուց նորին՝ ասէ․

Քաղաքացին

Գրակքէ, Գրակքէ․ վըճիռ ծերակուտին, ո՞չ հայիս․
Մատիր և ընթերցիր։

Կայիոս (մատուցեալ և ընթեռնու)

« ՓՈՑԹՔ ԽԸՆԱՄՈՅ ԲԸԴԵՇԽԻՆ՝
ՀԸՍԿԵՍՑԵՆ ԿԱՐՃԵԼ ԶՎԸՆԱՍ ՀԱՄԱՐԱԿԱՑ ՊԵՏՈՒԹԵԱՆ »։

Քաղաքացին (սեղմելով զաջ Կայեայ)

Ըզգոյշ կաց, տարաբախտ․ զաւ է վըճիռն այն կենացդ։

Լիկինիա

Ո՛հ, զի՞նչ լուայ։

Կայիոս (առ քաղաքացին)

Տեսանեմ զայն, և շնորհ զքէն ունիմ,
Ազնիւ քաղաքացիդ․ դու, եթէ ոչ պատրիցիմ,
Թըւիս ինձ կուինտիլ։

Քաղաքացին (խառնի յամբոխին)

Եւ բարեկամ քո․ քաջ լեր։

Կոռնելիա

Դարձ, որդեակ․ բազմաժողով ահա 'ի խառն ամբոխին,
Տե՛ս զի՛ այսօր սիգապանծ Ոպիմիոս մերձենայ․
Թափեսջի՛ր զԹըմբիրդ․ եհաս ժամ՝ քաջասիրտ արութեան։

Կայիոս

Ե՛րթ․ մի՛ ինչ երկիցես։

Կոռնելիա

Տո՛ւր առ իս զաջ քո։

Կայիոս

Կալջի՛ր․
Տե՛ս թէ դողայցէ՛։

digitised by A.R.A.R.@

Կոռնելիա

Ոչ, ոչ դողայ. ա՜յ որդւոյս
է այն. և Հաւաստի գործէ՝ զի չև ինչ պատուոյդ
Նախատինս ածեալ՝ գիտես դու մեռանել. դո՛հ եմ ես։

Կայիոս

Ողջամբ կաց, Լիկինիա… բարեաւ մնա… գիրկս ած զինև.
Թէ համբոյրս այս ոգեխառն… եթէ բախտին ինչ հրաման…
— Մայր իմ, եղկելւոյս այսմիկ խընամ տար, լեր զօրավիգն.
Այժմէն կորուսանէ նա զճանաչումն իւր. ողջ լեր.
Ի քեզ ապաստան առնեմ ըղձարան և զորդի։

« Կոռնելիա մեկնի՝ ունելով զԼիկինիա դանդաչոտ. մինչդեռ Կայիոս առաջի անդրեայ արձանի հօրն զկայ առեալ, ասէ »

Որ 'ի սիրտ իմ ձայն զանխուլ աստ 'ի վիմէս բարբառիս,
Ով ծընողդ իմ դու անյաղթ, իմանամ. դո՛հ եղիցես.
Կամ ազատ Հրաշակերտի Հռովմ 'ի սմին յայսմ աւուր,
Կամ ըստուեր սին Հուպ ընդ Հուպ և ես ըզքեւ փարեցայց։

ՏԵՍԻԼ ԵՐՐՈՐԴ

ՈՊԻՄԻՈՍ, յառաջոյ ունելով զնուիրակս, եւ ուղեկիցս՝ զծերակոյտն. ԴՐՈՒՍՈՍ եւ այլ տրիբունք. ՓՈՒԼՈՒԻՈՍ խառնեալ յամբոխի ժողովըրդեանն որ կուտի յամենայն կողմանց, եւ ԿԱՅԻՈՍ։

Ոպիմիոս

Ո՛ Հռովմայեցիք, ժողովըրդեան փըրկութիւն
Ի վտանգի կայ, թոյլ տուք ինձ խօսել առ ձեզ։

Ժողովուրդն

խօսեսջի՛ր։

Ոպիմիոս (Ելանէ 'ի բեմն)

Իրաւանցն աստուածային օրէնք և բաշխք Հրամանաց,
Եւ փառք մեծաշուք ատենակալ ժողովոյն,
վեհագոյն քաղաքացւոյ Հռովմայ անուն գերապանծ,
Ում ոչ ինչ 'ի կըշիռ գոյցէ 'ի ծագս աշխարհի,
Սըրբազան սահմանք՝ յոր մէն միում են գոյք յակոստան,
Հուսկ և ամենայն իշխանութեանց պահպանիչ՝
Այտընին խաղաղութիւն, դըժընդակ նոր օրինօք՝
Վըրդովեալ կան առ 'ի մահ, խընդրեն դարմանս հնարակերտ։
Կարեւոր յոյժ նիւթ խօսից. այլ կարեւմէր ես այնքան
Սիրտ իմ խոց դընի ցաւօք, զի և բանիցս իսկ Հանդէս՝
Քաջ 'ի բաց մընացէ քան զմեծութիւն ճառելեացս։

digitised by A.R.A.R.@

Արտասուել, կուիրինեանք, քան թէ խօսել կամ ատէն:
Եւ ում արդարև ժուժեսցեն աչք ապառումք՝
Ըզվեհին Հռովմայեցւոյ խորհելով զանըլն կորուստ:
Ծիջամւ մեծն այն և արդարն, անյաղթելին Սկիպիոն,
Եւ զոյգ նըմին չիջեալ խաւարեցաւ լոյս Հռովմայ:
Ա՛յլ էր գիտել ումեք գէթ արդեօք ձեռն ամբարիշտ,
կամ թէ մի՛ աստուածոց եհատ ըզթել զայս անգին

Փուլուիոս

Զարտուղի խոտորիս ընդ առաջարկդ, ով բըրդեաչխ.
Դարձ 'ի նիւթ բանիցդ արա:

Ժողովուրդն

ի նիւթն 'ի նիւթն արա դարձ:

Ոպիմիոս

Իմանամ քաջ՝ զի մահու անշընչացեալ դիւցազնին
Եւ սոսկ յիշատակ այսրէն՝ դողումն է ուրուք.
Ա՛յլ խօսել հանդերձեալ իմ զամպարիշտ օրինաց,
Զառաջինն յարդարոյ առնէն 'ի բաց խոտելոց,
Ցաւէ ինձ զի չիջեալ կայ կըշտամբող ձայն նորին,
Ցոյր 'ի կեանս՝ ազատութիւն հայրենեաց կայր դեռ յոտին,
Եւ լուռ կորակոր՝ որ 'ի կորուստ զայն ածէն:
— Ո՞ւր կայցես, Գրակքէ. ե՛կ երևեաց յատենիս.
Զօրինաց քոյին խօսիմ, խօսիմ ատ դէմ յանդիման
Ամբոխի ժողովըրդեանս, որում մատնիչ յայտնեցար:
Իղձեր դու զհինաւուրց ատեան Տեմեայցըն վեհից,
Ըզկըշիռ նոցին առ քո երեքարիւրսդ աւանդեալ:
Եւ զի՞նչ աղէ շահուց անտի օգուտս ընկալար.
Զայն քեզ ես ասացից. զապատութիւն եղերանց.
Զի ո՞ր ինչ քան զեղեռն 'ի Հռովմ ազատ կայ այսօր:
Եւ գրեցեր յանուն Հռովմայ քաղաքացւոյ, յանուն վեհ
Քան զանուն արքայական, զո՞յս. ըզդերիս. և զո՞րքան.
Բիւրաւորս. և առ իմէ. առ 'ի դքուեայս բուռն ածեալ՝
Բռնաւոր և հայրենեաց համայն ժըմերտ իշխիցես:

Կայիոս (յարձակելով 'ի բեմն)

Ո՛ւ ես բռնաւոր. էջ, էջ, սըտուկ դու, 'ի վայր,
Եւ քեզ տաց պատասխանի:

Ոպիմիոս

Իմ են բեմիս իրաւունք,
Ո՛ Հռովմայեցիք. ազատ ըզբանս իմ խընդրեմ:

digitised by A.R.A.R.@

Առաջին քաղաքացի

Իրաւունս նա խնդրէ. ազատութիւն ճառեսցէ։

Կայիոս

Այլ սրտէ...

Ժողովուրդն

Ազատութիւն խօսից։

Դրուսոս

Ի բաց կաց, անմիտ,
Հնազանդեա՛ց. յատենի աստ ժողովուրդն է իշխան.
Եւ խօսից՝ լի համարձակ ազատութիւն պարգևէ.
Լուռ լե՛ր. քեզ յաջմուն նորին զայդ ես տամ պատուէր։

Կայիոս

Ո՛վ զայրոյթ։

Երրորդ քաղաքացի (մեղմով առ Կայիոս)

Անըզգոյշ, արկ սանձ ցասմանդ տարադէպ,
Թէ լռել տալ գուն գործես՝ կորնչիս, ո՛չ տեսանես։

Ոպիմիոս

Առ քեզ վերըստին, առ քեզ են բանք իմ, Գրակքէ։
Պատրիչ ամբոխի ժողովրդեան զքեզ ձայնեմ,
Այո՛, զքեզ ևեթ, և ակն յայտնի ցուցանեմ։
Դու զգրգռեալ յարուցեր զԼիկինեանըն զօրէնս,
Ոյք յուզեալ դարձադարձ, և մերժեալ միշտ եռ ընդ եռ,
Ընդ երիս և առաւել դարուց շրջանս անդադար,
Կեղեքեալ խորխոցէ յանգ ընդդառնացեալ սիրտ Հռովմայ։
Այլ դուք, Կուիրինեանք, յակճիռս առ իս կացէք, ո՛ն,
Լըւարուք զաղետալիր արդիւնս անմիտ օրինացս
Եւ քըստմնեալ սոսկացարուք։ Հա՛պ ոն 'ի քաղաքս ընթասջիք,
Ընդ վեհս այս գերապանծ իշխանուհի աշխարհիս,
Եւ զի՞նչ անդ տեսանէք.— ըղձերակոյտ անարգեալ,
Ըզկեանս և զոգի հասարակաց պետութեան.
Երկպառակ յուզմամբ հերձեալ զքաղաքացիս համօրէն,
Ի շաղումբս սրտկանաց եղծեալ զեղծեալ զժողովուրդն,
Եւ դըժնեայ երազովք զերագոյնին բարութեանց՝
Ի խոհերս աղտոյ անդ խորամուխ ընկլուզեալ,
Ըստրուկ ապիրատից զըտեալ, ըստրուկ և անձին։
Եւ ո՞յր գործոյս հանդէս. Գրակքեայ. այլ ոչ այս ևեթ.
Ընդ գաշտս ընթացարուք. և զի՞նչ անդէն տեսանէք.
Չիրաւունս ամենակաց, յոր կանդաղին սըրբանուէր

digitised by A.R.A.R.@

Ըստացուածք անձնիւր՝ բարձեալ. ուր տեարք վտարանդի՝
ի նանիր բառնան բողոք առ օրինացն իրաւունս.
Խանգարեալ դաշինք համայն, և անըստոյգ կան սահմանք.
Անըստոյգ օժիտք հարսանց, և գըլխովին անըստոյգ
Հարց ժառանգութիւն. կան ցըրուեալ յոգս անպատկառ
Աճիւնք նախահարց, և զհինաւուրցըն շիրմաց՝
Խռովեալ ոսկերոյքն սուրբ դամբանականն ըզհանգիստ.
Եւ ո՞ր գործոցս հանդէս. Գրակքեայ. այլ ոչ այս ևեթ.
Ընդ բանակն ընթացարուք, 'ի զօրականն աչս արկէք,
Եւ զի՞նչ անդ նըշմարէք. մեղկ և մոլի և պըղծերգ՝
Ըզյաղթողսն յԱփրիկէ, ազգաց ազգաց Ասիոյ.
Ըզփառացըն բոց շիջեալ խապառ 'ի կուրծս անդ իւրեանց,
փախուստ 'ի գինուց հնարի արբուն մանկութիւն
Ի բաց ըզլատինեանսըն լքեալ փառըս դրօշուց.
Վըճարեալս հուսկ ուրեմն ըզզօրականն 'ի կարգաց,
Ի տար ըզնըդեհմըք վազեալ՝ զգըլխովք ուղղութեանց.
Եւ ընդէր, զի անդստանք առ ժողովուրդըն շնորհեալք՝
Ի բառնալ անդ ըզպիտոյս կարօտութեան ամբոխին,
Ա՛ռ եբարձ զըլխովին և զլաւութիւնսն 'ի նմանէ,
Ըզոսէր աշխատանաց, 'ի տառապանս անդ ժուժալ,
Ըզյարգանս առ զօրավարն, և զամենայն ինչ հակիրճ
Որ ահեղ ըհռովմէականն երբեմն առնէր զինուոր.
Եւ ո՞ր գործոցս հանդէս, ո՞ր ... և ասել իսկ չէք հարկ.
Քաջ իսկ սիրտդ առ ձեզ՝ մերընչեալ 'նդ այսքան ոճիրս՝ պատմէ [զայն.

Կայիոս

Մի՛ ևս այլ, Հռովմայեցիք, կամիմ, և ինձ տուք խօսել.

Ոպիմիոս

Զև յուսարտ խօսիցս հասի. առից ասել և զոր միայն,
Ըզվըճիռ իւր աստանօր տացէ և Հռովմ՝ զայնցանէ.
Էր հարց մերոց նախնեաց կընքեալ մահու պատուհաս՝
Ի գլուխ դատարկապորտ քաղաքացեաց համօրէն.
Այլ ո՞ւմ ումեք այժմիկ զայսմանէ փոյթք են լինամից,
Իսկ ո՞ր առաքինի բարբառ կոչեաց զայն 'ի կեանս.
Անգործ կայ գաւազան համարակալ իշխանաց,
Թափուր մընան գահոյք ատենակալ որերոյն,
Եւ յանարգ շահավաճառ մատնեալ օրէնք իրաւանց.
Ո՛հ, ո՞ւր ուրեք արդարըդ գըտանիս արդ Պիսոն,
Ո՞ւր ճըշմարտութեան քարոզդ 'ի մէնջ զանխլացեալ.
Ցարիսեան դու այժմ 'ի դաշտս ասիականըս մըրցիս,
Հելլենիկ դաժնեօք պըճնեալ զվարպըդ, բուրմամբք Ասորւոց.

digitised by A.R.A.R.@

Երանի՛ չըքնաղ բասարդ, զի առ 'ի մէնջ 'ի բացեայ,
Գուշակ եղելոյ չարեացըդ ոչ կաս 'ի դէտ։
Ոչ ըզձեռաբն զայնոսիկ տեսանիցես դու այլ ևս,
Ոյց մըղեղ զնումանտիա գործեալ թագին անպարիսպ,
Եւ 'ի հուր զկորընչոս դատեալ, յաւեր զկարքեդոն,
Ի չըզթայս ձրգեցին զՍէլեքանդրին պայազատ.
Ըզբռամբ ըզՑոյնս ածեալ և հինգհարիւր քաղաքաց
Իշխող 'ի գաւառան ասիականս ամբարձան.
Այո՛, զալսըն զայն ռազմիկ՝ արևակէզս յԱփրիկէ,
Կըլթոտս այժմ՝ և կընատ և դողդոջունս առ 'ի գործ,
Սուրբուրբեան կապելոյց 'ի գիներբուս մեղկացեալ,
Բաժակս ընդ սուսերաց փոխանակել առ 'ի զէնս։
Այլ 'ի զէն, 'ի զէն ահա հընչեն ողջոյն Արևելք,
Ի զէն Նուսիդիա հրակէզ, 'ի զէն Գերմանիա,
Ահ՝ ատի դառթէ Միհրդատ, անտի Յուգուրթ նենգաժէտ,
Ի Թիկանց հրոսեն կիմբրայց փոխորկալից դունդ ահեղ,
Ազգ ժանտ, անկարեկիր , այց քաղտարժ առ 'ի զէն՝
Ծաղու զմահուամբ եկեալ, վարէ զսուսեր 'ի մարտի։
Իսկ, եհէ, անմիտքըս մեք, մեք կուրամիտ զաչացուք,
Մատնեալքս յաւերժ 'ի խաղ ազմկայոյզ վըրդովչիս,
Մեք ցո՛ր վայր գեռ յանհոգս 'ի վիհ վատանգաց նըսկիցեմք,
Ցո՛ր վայր ժոյժ բերիցեմք նախատանաց անմբտիս։
Պաշտելո՛ղ իմ հայրենիք, տուն սրբբավայր աստուածոց,
Ո՛վ գահ գերամբարձ աստուածական ուղղութեանց,
Ի ծոցի քում տանիս մարտ, մարտ արտաքոյ զքեզ ճըգնէ,
Մարտ, աւեր և կոտորած շուրջ ամենուստ պատին զքեզ.
Իսկ կայցէ գեռ կենդանի՝ որ 'ի կորուստ ածէ զքեզ...
Վա՜հ, զի ոչ կենդանի եեթ, այլ լի ճոխաբար
Բարձրավիզ ընդ պողոտայս ճեմի, յԱտենաս յաճախէ,
Պատրէ զժողովուրդն, և մինչ յափանց Ափրիկայ
Այսրէն ահա դիմեալ դայ կեղեքել զՍիրտ քոյին...

Կայիոս

Շատ իսկ խօսեցար. լուարուք և ինձ, Կուիրինեանք։

Դրուսոս

Մի լըսէք, ժողովուրդ, նենգող բանից մատնըչիդ,
Մի թոյլ տայք բարբառել։

Կէս մի 'ի ժողովրդեանէն

Քա՛, լըռիցուք և Գրակքեայ։

Միւս կէս ժողովրդեանն

Մի. մատնիչ է Գրակքոս։

digitised by A.R.A.R.@

Առաջինքն

Ո՛չ. լուիցուք և Գրակքեայ։

Վերջինքն

Ի Տարպեան հայ՛ ոն Գրակքոս։

Գրակքոս

Ո՛հ տառապածովքն, աղէ՛ յիս,
կուիրինեանք. լուարուք նախ և ապա սպանջիք զիս։

Ծեր մի 'ի Ժողովրդենէն

Ո՛հ, լուիցուք, լուիցուք, եղբարք. յամբոխմանէդ ցածերուք,
Ունկըն դիք. գործ անպատեհ է ձեզ կընքել զքք 'ի մահ,
Զի լուեալ ինչ 'ի նմանէ, և մանաւանդ 'ի Գրակքեայ'
ի մերմէ բարերարէս։

Առաջին քաղաքացի

Այլ ո՛ն լիցէ ես ոսոխ'
Օրէնք են լսել նմա, և կալ համր 'ի բանս'
Ոյր ըղձայն իւր 'ի վաճառ եդ' զայգ անձինն ընդ պատույ։
Քեզ են, Գրակքէ, առ քեզ բեմին իրաւունք,
Յերաշխի վայն ես տանում՝ զերծս յամենայն կուսակցաց.
Ե՛լ անդ աներկիւղ. կացջիր անձին քում պաշտպան։

Կայիոս (Ելանէ 'ի բեմն)

Ըղձում զայս վերջին նուագ առ ձեզ խօսեցայց.
Թըշնամիք իմ, թըշնամիք ձեր, կընքեցին զիս 'ի մահ։
Եւ շնորհ կալայց ըղձէնջ զի ունկնդիր լեալ առ իս,
Ոչ թողուք մեռանել ինձ ընդ անուամբ վատութեան.
Զի զի՞նչ այլ չարաշուք քաղաքացւոյ հռովմայ բախտ,
Քան 'ի թիւս մեռելոց դրոշմել անուամբ բռնաւոր։
Ելցէ ինձ ընդ առաջ եղբօրս ըստուեր բըռնամահ,
Կըտտանօք նախատանաց լի և վիրօք թաթաւուն
Տեսեալ զիս' ձայնեսցէ. Ո՞յր դրոշմեաց ձեռն յանձին քում
Զայդքանի կեղտ մխատուց, ո՞վ ըզպատառուածսդ գործեաց։
Եւ զի՞նչ, Հռովմայեցիք, յայնժամ' առնել ինձ դարձուած.
Ասացից' զի նոյն այն ձեռք' շաղեալք յարեան քում յաւուրն'
Յոր ապախտ ժողովուրդըն զերախտեօքդ արարեալ,
Լիք ելթող զանկեալդ ըզքեզ ընդ խուժադուժ հարուածովք,
Որ ճեղքեալ պատառեցին զճակատդ, և քարշ ընդ ոստանն
Զիրան քոյին ձըգեալ, գազանացեալ մոլեգին
Ընդ ձիգ ասպարէզս հետս յարենէդ ներկելով,
Զինչ անարգ խոշընդոտըն դեռ յարեան ջերմն ըղձիդ

digitised by A.R.A.R.@

Ի պըտոյտըն Տիբերի ափին, որ թուխ կարմրաներկ
Ցառաջին քաղաքայնոյ յարենէ՝ խոյս ետ 'ի ծով։
Այլ և ոչ զեղկելիդ տրիբունական փըրկեաց բարձ,
Որ զանձնըդ ողըրբալըն կացուցանէր յօրինաց.
Նոյն այն ձեռք, ասացից, այո, պատրիկքն այն և զիս՝
Պարտաւոր Փիլասուցն այնմիկ՝ որ զքեզ բարձին 'ի կենաց,
Եւ զիս բըռնաւոր ձայնեալ՝ հատին յարեէ.
Զիս՝ որ զանձն իսկ ողջամբ ետու 'ի նուէր հայրենեաց,
Լոկ յօգուտ նըմին ծախեալ զուչ խորհըրդոցս ամենայն.
Զիս՝ որ զըղըլթայս՝ յոր պարաւանդ կայր ամբոխն
Ի հուժկու·աւազանւոյն ձեռաց՝ լուծի խորտակեալ.
Զիս՝ որ զամբոխին բըռնաբարեալ զիրաւունս
Առ նա դարձուցի վըյդ հայրենին կալուածոց,
Զիս զաղքատս և ռամկասէր, զըռնաւորաց խայթս յաւէրժ,
Եւ զիս բըռնաւոր... Ո՛վ ժողովուրդ դու Հռովմայ,
Ո՛հ, քանի այս զառնալթոյն վարձք որում քեզ ծառայէն։

Երրորդ քաղաքացի

Քաջ լեր, ով Գրակքէ. չէ ժողովուրդն ապաշնորհ.
Ցարև կենացս երդնում, բըռնաւոր ոչ ոք զրէ զքեզ.
Լեր անձին քում ջատագով, լեր արի, մի ինչ զողար։

Կայիոս

Դողալ ատտանօր բըռնաւորաց է միայն.
Հիմ՝, պատրիկ ազէ իցեմ ես. զողացի ինչ արդեօք՝
Ցաւուր՝ յորում 'ի վտանգ ահեղ ըղըլուխ իմ եդեալ.
Երկրամէտ ազատութեանդ՝ յաւերժափառ օրինօք
Ընկրճեալ կայի զըրման. և այժմ իսկ նոյն ինքն եմ ես,
Ծանիր զիս, Հռովմ, ծանիր զիս՝ որ զամբոխ որերոյդ
Ազատ, ինքնիշխան և գերագահ ամբարձի՝
Անիրաւ և բըռնաւոր ծերակուտին ախոյեան,
Ցեղեան ինչ արդեօք գրեսցես ինձ զայս, ժողովուրդ,
Ազէ առ՝ք պատասխանի, իցեմ յայսմիկ փիլաապարտ։

Երրորդ քաղաքացի

Քաւ, մի. ամենեքին մեք թագաւոր եմք աստէն։

*Երկրորդ քաղաքացի

Զօրութիւն իշխանութեան ընաւ ամբոխին է 'ի ձեռս։

Առաջին քաղաքացի

Ծերակոյտըն զօրծագիր եւեթ կամիցս, այլ ինչ ոչ։

digitised by A.R.A.R.@

Կասիոս

Թըշնամի ձեզ գիտասջիք ապա՝ զոր ինձ 'ի յանցանս
Ըզձերդ ազատութիւն եդեալ, ըզգայ յողբս առնու
Ըզբնաջինջ կորուսեալ վէս բըռնութիւն պատրըկաց.
Բազմեալ յատենի կային երիցս հարիւրեակ
Ծերակոյտ անդամոց կաշառակուրծ փառորեար.
Հըզօրին խըզեալ զօրէնս և կամ՝ գըտնէր զայն փարձու,
Իսկ յեղեան ազքատութիւն գըրէր, զվատթար զայս օրէնս՝
Անհետ 'ի միջոյ բարձեալ զվարձկան զիրաւունս,
Երից հարիւրոց ընտրեալ եդի դատաղաց
Խումբ հաւատարիմ՝ և անաչառ որերոյ,
Եւ բազորդ վըճռոյ նոցին ըզժողովուրդն արարի.
Արդ, ո՞վ ոք առաջի ձեր ամբաստան կալ զինէն
Ընդ գործ մի այսքանի սուրբ ժըպըրհեցի աստանօր.
Նոյն ինքն Օպիմիոս ոք, և նոքին իսկ ինքեանք
Զարագործքն այն, կուիրինեանք, յորոյ բարձաւ անարգ չահ
Ի փոճառ ըզկեանըս ձեր և զընչից զայդ արկանել...
Վա՜յ, եղո՜ւկ քեզ՝ թափուր և սին անուն լաւութեան,
Ցաւակ ներշաւակի եղեռնապարտ որերոյն.
Եւ ո՞ւր այլ ուրեք, աւա՜ղ, ըզգանդ ամբարձցես
Թէ 'ի ծոց իսկ աստ Հռովմայ, թէ 'ի բնավայր դից նորին՝
Զանուն յանցաւորի տանիս և կրես պատուհաս.

Ծեր մի յամբոխէն (միոյն առ միւսոյն)

Շատ իսկ ճըշմարիտ է արդարև զոր ասէն.
Խռանդուն 'ի լաւութեան լինել վըտանգ է մեծ յոյժ.
Աստուած ոք 'ի չըրըթանց նորին բարբառ արձակէ.

Կասիոս

Աստուածոցըն գերագոյն շնորհիւ ծընեալս ես 'ի ծոց
Գեղանւոյն իտալիոյ, զիտալիա բնաւ կցորդս
Իրաւանց հռովմէական քաղաքացւոյ կացուցի.
Եւ 'ի բաց ըզգերութեան նորին զշըղթայս ընկեցեալ,
Ազատ և գերագոյն եդի ազգաց աշխարհի.
Դուք, Հռովմայեցիք, դուք առաջինք և ընտրեալքդ
Ի ծընունդս այսքանւոյ մօր, ասասջիք աղէ դուք՝
Եղե՞ռն ինչ զիտալականն ազատութիւն կոչիցէք.

Առաջին քաղաքացի

Քաւ, մի. իտալացիք եմք հանօրէն, ազգ միակ,
Ցոհմըն մի.

digitised by A.R.A.R.@

Ժողովուրդն

Իտալացիք ամենեքին և եղբարք։

Ղեր մի

Ո՛վ քաղցրիկ աւաչք, իմաստք ասուածախոհք և վրսեմ.
Ա՛ջք իմ յարտասուս առ խընդութեան ուսոցին։

Կայիոս

Ահա յունկն ինձ հատանեն հռովմէական ձայնք վրսեմ,
Հուսկ զարանց գերամեծար ահ՝ ակամեմ՝ զարտասուս.
Այլ լալեսցդ օ՛ն սանձ արկեալ՝ լուր զմեծ եղեռն իմ զյիտին,
Եւ մի խընդութեան, այլ առ զայրոյթ բարկութեան
Արտասուս կաթեցուցես, ոմ դու ներնգեալ ժողովուրդ.
Ազէ զուշ մըտայդ առ իս կալիր 'ի լուր բարբառոյս։
Ընչաքաղց ագահութեան անգութ՝ աւագ որերոյն,
Ըղձ ըշուառ քոյին ըզկեանդ արկեալ 'ի չափս համարոյ,
Բարձեալ էր զամենայն ինչ առ 'ի քէն կողոպուտ,
Լոկ զոսկիսդ ևեթ 'ի դՀուռ թոզեալ յանդամըս մարմնոյ.
Այլ իցէ՛ թէ գրեթ ացեալ և զլունչդ 'ի բաց քաղէին։
Թողին այսր զկեանդ 'ի քեզ անգութքն այն, աւաղ,
Զանբսպառ արտասուսդ արկեալ 'ի խինդըս ծաղու.
Թողին ձեզ զոսկիսդ՝ առ ընդ ամենուր հարկանել,
Ընկճեալ զայնս և դերի կամ յարհամարհ հս ունել։
Հապ՝ օ՛ն լուր, լուր ժողովուրդ դու զմեծ եղեռն իմ՝ գրմնեայ
Զոր 'ի սուղ բանս հատանեմ՝ ասատէն. չնորհել քեզ ըզքոյդ։
Ցալ երկիր բաւական առ 'ի հանդիստ դու զնաքեայ
Ի ծածկոյթի վաստակաբեկ և չարատանջ ոսկերացդ։
Ո՛հ, եղբարք իմ՝ եղկելիք. են գազանաց իսկ անձնիւր
Ի ժայռս և յանտառս որջք և կաղաղք ամրափակ,
Ուր խոնջ անդամովքըն գայան հեշտ 'ի հանգիստ,
Ի ծաղր ըզզայրոյթ արկեալ զենումեան տարերաց։
Իսկ դուք, Հռովմայեցիք, դուք որ ըզկիանս կամակար
Ընդ զինուք ծանրաբեռնեալ տայք հայրենեաց վասն 'ի մահ,
Դուք իշխողդ աշխարհաց, զենչ յաշխարհի աստ ունիք՝
Ա՛լ զոդ միայն և զշոշ լուսոյ՝ զոր չիք հնար բառնալ։
Մինչ ժամանակ ընդ գիւղորէս, սովալրլուկ նըւաղեալք
Ծրնդեալ ամուսինք, ծիւրեալ որդիք մերկանդամ,
Պար առեալ զձեզ ողորմահեծ և սրխուր
Հա՛ց հա՛ց պաղատին 'ի ձէնջ. անդուստ անուպայքն
Արպեալք ծիրանաւորք՝ շուրջ բոլորեալ զսեղանով՝
Փափկացեալք փեսկեենեան 'ի նուագս երգոց մեղկաշունչ,

digitised by A.R.A.R.@

Պարարին գինէհարեալք 'ի փայլեանեան լի բաժակս,
Մըխեալք 'ի փափուկ խորակաց յանարգ հեշտութիւնս.
Այլ ձեր է այն արիւն, զոր ոչ յագուրդ բաւական
Լափլէզ որովայնք նոցին ծըծեն ցըվախճան.
Արիւն ձեր ապարանքն 'ի շողշողուն շըքեղ փայլս,
Նըւագքն ոսկեղէնք, բուրմունք խընկոցն արուայիկ,
Ծիրանիքըն Սիդոնի, ալեքսանդրեան գորգք փափուկք.
Արիւն ձեր անդաստանքն, այքեան հովիտք պերճաշուք,
Տուսկուլեան ամարասանք և տիբուրտեան գըրգարանք,
Պատկերքըն նըկարէն, սիւնքն և ազնիւ կուռ կըճեայք,
Եւ համայն՝ որ զհեշտ հանգիստ նոցին գըգուեալ պարարէն՝
Ձեր է այն արիւն, զոր յորդաբուխ վըտակօք՝
Ի մարտըս թըշնամի սուսեր քամեաց 'ի ծոցոյդ.
Ձեն նոցա՝ բայց եղերունք ևեթ իւրեանց սեփականք.
Ո՛վ անգութ, ո՛վ ամբարիշտ սըրտիւ պատրիկք անողորմ.
Իսկ մարտից ապա 'ի դաշտս Արիսեան տակ 'ի տանջանս՝
Ըստամբակս իշխեն և վատ ըզձեզ ձայնել անպատկառ.
Նոյն նոքին՝ որոց համայն արևելից զեղխութեամբք
Մեղկեալ թուլացուցին ըզլատինեան ժուժկալ բարս,
Եւ զողջոյն բանակ զօրուն 'ի խառնագնաց լուծին կեանս.
Նոյն նոքին՝ որոց լափեալ զհասարակաց գանձուն կոյտս
Ըստրուկ ժողովըրդոց և զպետութեան մըթերից,
Լըքեալ սովամահք ըզզօրականըն թողին,
Եղկելի զնա կացուցեալ այնուհիկ և զող, յուսահատ.
Այլ և յայսր ամենայնի վերայ՝ իշխեն քըրթմընջել
Եղծեալ զօրականին ըզհինաւուրցըն զօրէնս,
Այլ և յայսր ամենայնի վերայ՝ 'ի խառն մարտամբուխ
Քաջալերս առ ձեզ գոչեն. Հապ՚ ծո խորախոյս առ 'ի մարտ
Հայրենեաց վասն աստուածոց, վասըն շիրմաց հարց ձերոց.
Այլ ո՞վ ոք, եղկելիք դուք, ո՞յր ուրուք առ 'ի ձէնջ
Վառարան գուցէ, սեղան կամ գամբանաց վէմ անարգ.

Ժողովուրդն (բարձրաձայն աղաղակօք)

Ա՛չ. ոչ ուրուք, քաւ, ոչ ումեք.

Կայիոս

Չէ՛ ձեզ ապա,
կամ ընդէ՞ր գնայք դուք 'ի մահ. ո՜հ, և վասն ո՞յր խոցուածքդ այդ
Զոր բասր 'ի նիշ արեան և ըմբռնօս լուր վէրօք՝
Պատուուն ընդ գըրգըլեա՝ լըդ գիտեն աչք իմ՝ շողալ.
Ո՛հ, տայր ոք ըղնոսին առ 'ի համբոյր ինձ շըրթանց.
Գործիմ, ո՜հ, 'ի տեսիլդ յոյդ, որ և բուռն ինձ առնէ

Մըռընչել առ զայրոյթ ցասմանս և զլաց հարկանել,

Երկրորդ քաղաքացի

Ո՛վ Կայիոս եղկելի. արտասուէ՛ նա, վասըն մեր արտասուէ։
Սի՛րտ վեհանձն։

Երրորդ քաղաքացի

Այլ ծանրագնի լիցի լացն այն պատրըկաց։

Փուլուիոս

Հա՛պ՚ օն ծանրագնի լիցի, և զի՞ կայք, ընկերք,
Ահա ժամ... օն ձիոն 'ի զէն, խրախոյս, եկայք զիմ կընի։

Կայիոս

Կուիրինեա՛նք...

Առաջին քաղաքացի

Կացջի՛ք, խօսել առնու, կացջի՛ք, լուռ լերո՛ւք։

Կայիոս

Եղբարք իմ, եղբարանց իմոց գիտակք էք այժմիկ,
Ի վրէժ նորին հա՛պ՚ օն վառեցարուք, հարէք զիս.
Ի ձեզ զեղկելիս զայս լըքանեմ ըղմարմին,
Ընդ քարշ 'ի պողոտայս ածջի՛ք արեամբ թաթաւուն։
Խայտասցէ Ոպիմիոս՝ ընդ մահ իմ գոհ պանծասցի,
Տանջանօք սիրելոյդ զիջցէն մոլուցք իւր ցասման։
Ոչ նոր ինչ զազգին իմոյ ուղիք լատինեանք
Տեսանել ունիցին զարիւնոտ կոտորած.
Ոչ նոր ինչ Տիբերեայ լիցի ալեաց բարեգութ՝
Ըզգրակքեանց 'ի յորձանս իւր խորասոյզ տալ զանգամս.
Եւ ոչ նոր ինչ մայր նոցին եղէ ափանց 'ի խընդիր՝
Պատառուն և կեղեքեալ մարմնոյ որդւոյն առ 'ի գիւտ...
Այլ, ահ, հայրենիքդ իմ, երանի թէ մեռեալ...

Երրորդ քաղաքացի

Մի՛ դու քեզ այլ կեցցես. մեռցի՛, մեռցի՛ Ոպիմէ [1]։

Ոպիմիոս

Ի վեր ըղտապարագ օն ամբարձէք, սակրաւորք.
Խոցեսջի՛ք զոր միանգամ յանդըգնիցին խիզախել [2]։

1. Գուածանք կենաց Ոպիմեայ մոլեգին կրքնեն և երեքկնեն զվերջին բանսդ։

2. Անտիկեոս՝ գնդապետ սակրաւորաց, առաջնորդ խմբի իւրում անցեալ, և 'ի վեր զտապարն մերկացեալ ընդդէմ գնայ ամբոխին գոչելով՝ Ի բա՛ց 'ի բա՛ց։

digitised by A.R.A.R.@

Փուպլիոս

Զարկի՛ր դու սպասեալ՝ բռնաւորի զազրագործ,
Օ՛ն մեռի՛ր դու զառաջին ուրեմն[1].

Կայիոս

Ա՜յ, զի՞նչ գործեցէք[2].

Փուպլիոս

Օ՛ն, առէք խրախոյս. մեացի՛ Ոպիմիոս[3].

Ժողովուրդն

Մեացի նա։

Կայիոս

Կացջի՛ք դուք[4], և կամ զիս աստ ընդ նմին ըսպանէ՛ք.
Եւ զի՞նչ, օ՛ն. չըգուցե՞ն ինչ այլ ուղի՛ք ձեզ անվրէպք
Վրիժուց կամ փըրկութեան՝ քան զճանապարհ եղերանց։
Աստուածոցն, առ Ոպիմիոս, առ ծերակոյտըն թողէք
Ըզպաշտօն դահճաց. օրէ՛նք և ոչ արիւն, կուիրինեանք։
Ի բաց ըզզայրոյթդ արկէք, 'ի բաց զայդ ցասումն,
Ի պատեանս ըզսուսերդ, և զամօթի հարերուք
Ընդ մոլի կատաղութիւնդ, որ զաչացուս արարեալ՝
Ընդ ուղի սպանչաց ըզձեզ հարազատիս իմ քարշէ։

Երրորդ քաղաքացի

Վրէժ կամիմք։

Կայիոս

Եւ կալցուք զայն։ — Լո՛ւր դու ինձ, ո՛վ բըդեաշխ,
Եւ 'ի վեր զահաբեկ պակուցեալ դէմըդ կալջի՛ր։
Ժըպըրհեցար դու զօրինացն եղծանել զվեհ սըրբութիւն.
Ամբաստան ուրեմն ըզքեզ կամ զհայրենեաց Թըշնամւոյ.
Եւ այն ինչ յաւարտ հասցէ պաշտօնդ այդ քո մեծ,
Բարձ մըդեշխութեանդ՝ որ սուրբ արդ զանձնըդ գործէ,
Ես Կայիոս Գրակքոս կոչեմ ըզքեզ յատեան այսր 'ի դատ,
Առ քում դատաւորիս, առ վրէժխընդիրն յանցանաց,
Տալ ըզքէն և ըզգործոցդ համար, առնուլ պատուհաս։
— Այր ոք այր, Հռովմայեցի՛ք, կացցէ 'ի ձէնջ աստ 'ի լուռ.
Եւ մի՛ բնաւ ումեք ձայն Նախատանաց ամբառնալ.
Ամբոխին լռութիւն՝ առ բռունս է խրատ ահեղ սոսկալի.
Հապ՛ օ՛ն մեկնեսջի՛ք խաղաղութեամբ դուք 'ի բաց.

1. Անկանի Անտիլլոս խոց բազմաթիւ վիրօք։
2. Ի վայր վազելով 'ի բեմէն։
3. Առ դաւակիցսն։
4. Ընդ մէջ մտեալ Ոպիմեայ և դաւակցացն։

digitised by A.R.A.R.@

Ըզհըպարտըս զայս գերի մատնեալ 'ի խայթըս խըղճին [1]։

Փուլուիուս (մեկուսի)

Ով անմիտ լաւութիւն, ով վատասիրտ գըթութեանս.
Ի ձեռըն Գրակքեայ՝ Ոպիմիոս կենդանի՜...
Ո՛հ, արիւն ինձ այլ խըդրեմ, արեան վառի յիս ծարաւ,
Եւ երկաթս այս ինձ արիւն տացէ թէ ոչ զայլոց... զիմ։

ՏԵՍԻԼ ՉՈՐՐՈՐԴ

ՈՊԻՄԻՈՍ, ԴՐՈՒՍՈՍ, ԾԵՐԱԿՈՅՏՔ ԵՒ ՍԱԿՐԱՒՈՐՔ

Դրուսոս

Ո՛հ, և զի՞ գեռ լուռ կայցես, խեթիւ հայիս և մռընչես.
Դու նմա զմահ խընդրէիր, և նա քեզ կեանըս շնորհէ.
Եւ զի՞նչ յետ այսքանի արդ երախտեաց խորհիցիս։

Ոպիմիոս

Ըզվրէժ։

Դրուսոս

Եւ կամիցի՞ս դու զԳրակքեայ...

Ոպիմիոս

Զմեռանել։ —
Լուր ինձ, Հռաբիրիէ։

Դրուսոս (մեկուսի)

Համակ 'ի միտ արդ առնում՝
Զի՞նչ Ոպիմիոս և սիրտ 'ի նմա որպիսի։

Ոպիմիոս (առ Հռաբիրիոս, որ մեկնի նոյնհետայն)

Փութասջիր լընուլ զպատուէր իմ։ — Զհայրենիս թէ սիրէք՝
Պատրաստ ինձ կացջիք, տրիբունք։ — Լուարուք, ծերակոյտք։
(Մեկնի, գաղտնի շշնջելով ընդ ծերակոյտ առագանւոյն)

1. Մեկնի, և ամբոխն չհետ նորա ելանէ ցածուն հանդարտութեամբ։

Չորրորդ Հանդէսն յառաջիկայս։

Թարգմ. Հ. Աթանաս Տիրօյեան

digitised by A.R.A.R.@